- գիտենալ Ջոկատի մեկնման տարածքը, ջրաղբյուրների, օբյեկտների տեղերը, ինչպես նաև ջոկատում առկա տեխնիկայի մարտավարատեխնիկական տվյալները.
- ստուգել մարտական հաշվարկում գտնվող հրշեջների կողմից պարտականությունների իմացությունը, մարտական հագուստի ու հանդերձանքի վիճակը.
- մշտապես ստուգել հրշեջ ավտոմոբիլների, օդակի անձնակազմի շնչառական ապարատների, մեկուսիչ հակազագերի և հրշեջ գույքի սարքինությունն ու պահպանումը.
- օդակի հետ տագնապով մեկնել հրդեհի և ղեկավարել օդակի կողմից իրականացվող հրդեհների մարման, վթարների կամ տարերային աղետների հետևանքների վերացման աշխատանքները.
- հերթապահության օրվա ամփոփումները անցկացնելիս, տալ օդակի անձնակազմի աշխատանքների գնահատականը:
- ապահովել հրշեջ ավտոմոբիլային և տեխնիկական արագ բերումը մարտական վիճակի՝ այդ մասին զեկուցելով խմբի, հերթափոխի պետին.
- միջոցներ ձեռնարկել անձնակազմի հրդեհի վայրում թրջված մարտական հագուստը չորացնելու կամ փոխելու համար:
- ապահովել բացազատումը ամենակարճ ժամանակում.
- օդակի անձնակազմին ցույց տալ ջրաղբյուրը, փողոկազածերը փոխելու ուղղությունը, ճյուղավորումը դնելու տեղը, նշել փողակների քանակն ու տեսակը, փողակավարների դիրքերը, հրշեջ սանդուղքները տեղադրելու տեղերը, և հետևել դրանց ճիշտ կատարմանը.
- ներգրավվել պահանջվող քանակի հրշեջ-փրկարարներ, բացատրել կատարվելիք աշխատանքների նպատակը, տեղը և ծավալը.
- եթե աշխատանքները կատարվում են մեկ օդակի կողմից, ապա հրշեջ փրկարարներին ցույց տալ քանդված նյութերը տեղափոխելու վայրը, վերին հարկերից ցած նետելու դեպքում տարածքը սահմանազատել ժապավենով, նշանակել պահակետ, իսկ գիշերային ժամերին տարածքը լուսավորել.
- ապահովել աշխատանքների անվտանգ կատարումը և միջոցներ ձեռնարկել էլեկտրասարքավորումներն ու հաղորդալարերը հոսանքազրկելու, գազատարները փակելու, ինչպես նաև կառուցատարրերի փլուզումը կանխելու համար.
- հետևել կրող կառուցատարրերի փոփոխություններին, հնարավորության դեպքում՝ կանխել դրանց վնասումը, իսկ դրանց վնասվածության վտանգավոր աստիճանի դեպքում՝ ապահովել ենթակա անձնակազմի անվտանգությունը:
- հրշեջ-փրկարարներին ցույց տալ տարահանման հաջորդականությունը, ճանապարհը և նյութական արժեքները տեղավորելու վայրը.
- Ավարտի ազդանշան ստանալուց ստուգել օդակի անձնակազմի առկայությունը.
- ստուգել տեխնիկականության առկայությունը և ավտոբաքը լցնել ջրով.
- օդակը՝ վերադարձին պատրաստ լինելու մասին, զեկուցել այն պետին, որին ենթակա էր հրդեհի վայրում:
- կազմակերպել հրդեհի վայրի անընդհատ հսկումը.
- հրդեհաշիջման միջոցները պահել պատրաստ վիճակում.
- այրվող օջախներ հայտնաբերելու դեպքում՝ զեկուցել հրշեջ-փրկարարական ջոկատ, ճգնաժամային կառավարման (ազգային) կենտրոն և միջոցներ ձեռնարկել դրանց մարման համար.
- Ջոկատ վերադառնալ միայն կարգադրության դեպքում, որի մասին տեղեկացնել կազմակերպության տնօրինությանը:

- առաջինը հրդեհի վայր ներկայանալիս ղեկավարել հրդեհաշիջումը մինչև վերադաս պետի ներկայանալը, իսկ հրդեհի վայր ժամանած իրավասություն ունեցող վերադաս պետին զեկուցել իրավիճակը և կատարել նրա հրամանները.
- գիտենալ իր օղակի մարտական խնդիրները և հրահանգավորել ենթակա անձնակազմին.
- ապահովել մարտական հաշվարկի փոխգործողությունները.
- ապահովել հրշեջ-փրկարարների կողմից անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը.
- հրդեհաշիջման տեղամասում իրավիճակի փոփոխման դեպքում կապ հաստատել ենթակա պետի հետ և զեկուցել այդ մասին.
- ապահովել հրշեջ տեխնիկայի արդյունավետ աշխատանքը.
- ապահովել հրշեջ ավտոմեքենայի ժամանակին լցավորումը կրակմարման նյութերով.
- կարողանալ աշխատեցնել ռադիոկայանը, գիտենալ և պահպանել ռադիոկապից օգտվելու կանոնները:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Հաշվետվությունների մշակում
3. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում

2. Ժամանակի կառավարում
3. Կոնֆլիկտների (սթրեսի) կառավարում
4. Ծառայությունների մատուցում և կառավարում (քաղաքացիների սպասարկում)

4. Կազմակերպման շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Օժանդակում է իր կառուցվածքային ստորաբաժանման ավելի ցածր պաշտոն զբաղեցնող փրկարար ծառայողների աշխատանքներին:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Պաշտոնի անձնագրով նախատեսված լինելու դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կայացմանը:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

1) իր կառուցվածքային ստորաբաժանման ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում.

3) տվյալ մարմնից դուրս շփվում է իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ.

4) տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի.

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

1) իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների վերլուծմանը և գնահատմանը.

2) բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության ավագ ենթասպայի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՏՈՒԿ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈԿԱՏԻ ԹԻՎ 116 ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) թիվ 116 Նոյեմբերյանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-19)։

1.2. Ենթակա և հաշվետու է

Ջոկատի հրամանատարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին, Կենտրոնի պետի տեղակալին։

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Ջոկատի հրամանատարին անմիջականորեն ենթակա է Ջոկատի հրամանատարի տեղակալը։

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ջոկատի հրամանատարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի հրամանատարի տեղակալը։

1.5. Աշխատավայրը

Հայաստան, Տավուշի մարզ, գ. Ոսկեվան, 1-ին փողոց, թիվ 13 տուն։

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

- Հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է ջոկատի պատրաստականության, օրինականության անշեղ և խստիվ

- պահպանման ու կտարման համար, կադրերի ընտրության, կարգապահության, ծառայողական պատրաստվածության, ծառայության կազմակերպման, հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների անցկացման, մարտական խնդիրների կատարման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարման, հրշեջ-փրկարարական տեխնիկայի պահպանման ու ճշգրիտ շահագործման համար։
- անմիջականորեն ղեկավարում է Ջոկատի գործունեությունը, կազմակերպում նրա աշխատանքները։
- կրում է անձնական պատասխանատվություն՝ իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։
- Վարչության պետին առաջարկություններ է ներկայացնում Ջոկատի անձնակազմի խրախուսման և կարգապահական տույժեր տալու վերաբերյալ։
- կազմակերպում է օբյեկտների հրդեհաշիջման օպերատիվ պլանների և քարտերի մշակման ու կազմման աշխատանքները։
- Վարչության սպասարկման տարածքում իրականացնում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառին առնչվող գործառույթներ։
- Վարչության պետի (տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ։

Իրավունքները՝

- գբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իրականացնել ամենօրյա հսկողություն՝ Ջոկատի ներքին օրակարգի պահպանման նկատմամբ,
- անհրաժեշտության դեպքում անձամբ մեկնել դեպքի վայր և ղեկավարել Ջոկատի գործողությունները.
- իր լիազորությունների շրջանակներում համագործակցել մարզի այլ ծառայությունների հետ.
- կազմակերպել հրշեջ ավտոմեքենաների վարորդական կազմի ամրակցման և տարեկան տեխնիկական զննման աշխատանքները.
- մասնակցել Ջոկատի նյութական արժեքների տարեկան գույքագրումն անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին.
- Վարչության պետին առաջարկություններ ներկայացնել Ջոկատի անձնակազմի խրախուսման և կարգապահական տույժեր տալու վերաբերյալ.
- կազմակերպել օբյեկտների հրդեհաշիջման օպերատիվ պլանների և քարտերի մշակման ու կազմման աշխատանքները.
- կատարել անձնակազմի միջև պարտականությունների բաշխում՝ հաշվի առնելով նրանց պատրաստվածության աստիճանը.
- առաջարկություններ ներկայացնել ենթակա անձնակազմի աշխատանքային, սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ.
- իրականացնել հսկողություն՝ ենթակա անձնակազմի կարգապահության մակարդակի բարձրացման ուղղությամբ.
- իր լիազորությունների շրջանակներում մասնակցել խորհրդակցությունների, դասընթացների, սեմինարների.

- մասնակցել փրկարարական ծառայության ծառայողական պատրաստության պարապմունքներին.
- Վարչության սպասարկման տարածքում իրականացնել արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառին առնչվող գործառույթներ.
- Վարչության պետի (տեղակալի) հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- սպասարկման տարածքում իրականացնել հրդեհաշիջման, որոնողափրկարարական, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ.
- սահմանված կարգով մասնակցել մարզի տարածքում կամ նրա սահմաններից դուրս արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին.
- դեպքի վայրում իրականացնել տուժածներին առաջին օգնության ցուցաբերման և անվտանգ տարածք տեղափոխման աշխատանքներ.
- համաձայն «Հրդեհների վերլուծության կարգի» պահանջների անցկացնել ջոկատի հրդեհաշիջման տարածքում առաջացած հրդեհների վերլուծություն և տալ եզրակացություն.
- կազմակերպել և իրականացնել հրդեհաշիջման տարածքի հակահրդեհային ջրաղբյուրների և հրշեջ-հիդրանտների ստուգումների և ներկայացնել առաջարկություններ անսարքությունների վերացման համար.
- իրականացնել հրդեհաշիջման տարածքի օբյեկտների օպերատիվ-տակտիկական առանձնահատկությունների ուսումնասիրություն.
- անցկացնել հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ՝ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում՝ ներգրավելով ջոկատում առկա հրշեջ տեխնիկան.
- հրդեհային անվտանգության ապահովման նպատակով փոխհամագործակցել օբյեկտի ղեկավարության, անվտանգության բաժնի և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ.
- կազմակերպել օբյեկտի հրդեհային անվտանգության վերաբերյալ ղեկավար մարմինների որոշումների, կարգադրությունների ու ցուցումների իրականացմանն ուղղված աշխատանքները.
- օբյեկտի ղեկավարության քննարկմանը ներկայացնել առաջարկություններ հակահրդեհային ջրամատակարարման,

կապի միջոցների, հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման հինքնաշխատ համակարգերի ու սարքավորումների վերազինման վերաբերյալ.

- իր իրավասության սահմաններում պահպանել և օգտագործել հրշեջ-փրկարարական ջոկատին հանձնված պետական գույքը.
- հսկել սպասարկման տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական հինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.
- իրականացնել սպասարման տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.
- մասնակցել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման դիմակայմանը.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Խնդրի լուծում
3. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կառավարում արտակարգ իրավիճակներում
3. Ժամանակի կառավարում
4. Կոնֆլիկտների (սթրեսի) կառավարում

5. Ծառայությունների մատուցում և կառավարում
(քաղաքացիների սպասարկում)

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխզնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՏՈՒԿ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈԿԱՏԻ ԹԻՎ 116 ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՐՇԵՋ- ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ջրկատի (այսուհետ՝ Ջոկատ) թիվ 116 Նոյեմբերյանի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջրկատի հրամանատարի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-20)։

1.2. Ենթակա և հաշվետու է

Ջոկատի հրամանատարի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Ջոկատի հրամանատարին։

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Ջոկատի հրամանատարի տեղակալին անմիջականորեն ենթակա է Ջոկատի ծառայողները։

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ջոկատի հրամանատարի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի հրամանատարը։

1.5. Աշխատավայրը

Հայաստան, Տավուշի մարզ, գ. Ոսկեվան, 1-ին փողոց, թիվ 13 տուն։

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Հրշեջ-փրկարարական ջրկատի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է ջրկատի մարտական պատրաստականության, կարգապահության և

ներքին կարգ ու կանոնի պահպանման, ջրկատի անձնակազմի կողմից առաջադրանքի կատարման, անձնակազմի մասնագիտական պատրաստության, ուսումնանյութական բազայի ստեղծման, մշտական բարելավման և սարքին վիճակում պահելու համար։

2. հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով հերթապահ խմբերի մարտական պատրաստականության մշտական ապահովումը.
3. հրդեհաշիջման, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո ավտոմեքենաներն ու տեխնիկան արագ հաշվարկի դնելը.
4. անձնակազմի կարգապահության մշտական ապահովումը.
5. Ջոկատի, վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի և այլ ծառայությունների հետ կապի մշտական պահպանումը.
6. Ջոկատի տարածքի, ծառայողական և օժանդակ սենյակների պահպանության ու մաքրության ապահովումը:
7. անմիջականորեն ղեկավարում է Ջոկատի գործունեությունը, կազմակերպում նրա աշխատանքները.
8. կրում է անձնական պատասխանատվություն՝ իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
9. պատասխանատու է Ջոկատի առջև դրված խնդիրների և գործառույթների կատարման համար.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

- իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- Ջոկատի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով առաջարկություններ ներկայացնել Ջոկատի հրամանատարին.
- իր իրավասության սահմաններում ապահովել Ջոկատի գործունեությունը, կազմակերպել աշխատանքները.
- իր իրավասության սահմաններում ապահովել Ջոկատի անձնակազմի մարտական պատրաստականության, ծառայողական կարգապահության, օրինականության խստիվ պահպանման, բարոյահոգեբանական վիճակի, կադրերի տեղաբաշխման, հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպման և անցկացման, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կատարմանն ու վթարային փրկարարական աշխատանքների անցկացմանը պատրաստ լինելը, Ջոկատի սենյակների, սարքավորումների, միջոցների, հրշեջ տեխնիկայի և տեխնիկական միջոցների պահպանումը ու ճիշտ շահագործումը.
- գիտենալ Ջոկատի հիմնական և հատուկ հրշեջ տեխնիկայի տակտիկատեխնիկական տվյալները, ապահովել նրանց անվտանգ և անխափան շահագործումը, հսկել և անձամբ ղեկավարել հատուկ հրշեջ տեխնիկայի վարորդների պատրաստականության պարապմունքները, տեխնիկական ստուգատեսների ժամանակին և որակով անցկացումը, տեխնիկական փաստաթղթերի գրագետ, ճիշտ և ժամանակին գրանցումները.
- իր իրավասության սահմաններում իրականացնել ամենօրյա հսկողություն Ջոկատի ներքին օրակարգի պահպանման, էլ. էներգիայի, ջրի, հեղուկ վառելանյութի, հրդեհաշիջման միջոցների և քայլուղիների՝ սահմանված չափաքանակներով ծախսերի վրա.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել և անցկացնել հրշեջ-տակտիկական գիշերային և ցերեկային պարապմունքներ հրդեհաշիջման տարածքի տարբեր օբյեկտներում՝ ներգրավելով Ջոկատում առկա հատուկ հրշեջ տեխնիկան.
- անհրաժեշտության դեպքում անձամբ մեկնել հրդեհների, վթարների և դժբախտ պատահարների վայր, ղեկավարել

Պարտականությունները՝

- անհրաժեշտության դեպքում ընդգրկվել մարտական հերթապահության, այդ թվում՝ առաջնագծում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխարգելման նվազեցման և վերացման փրկարարական աշխատանքների մարտական հերթապահությանը.
- մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, տարածքային պաշտպանությանը, այդ թվում՝ իր լիազորությունների շրջանակներում սահմանամերձ տարածքներում հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարին, մարտական գործողությունների և զենքի կիրառման հետևանքներից բնակչության պաշտպանությանը, կապտաժների, կամուրջների և այլ կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությանը.
- կազմել և Ջոկատի հրամանատարին ներկայացնել Ջոկատի անձնակազմի հերթական արձակուրդների տրամադրման ժամանակացույցը.
- մշտապես աշխատանքներ տանել իր մասնագիտական գիտելիքների բարձրացման ուղղությամբ.
- ոլորտում աշխատանքները բարելավելու, ծառայության որակը բարձրացնելու և այն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, իր իրավասության շրջանակներում, Ջոկատի հրամանատարին ներկայացնել առաջարկություններ.

հրդեհաշիջման, վթարային փրկարարական աշխատանքերը, ապահովել համագործակցությունը այլ ծառայությունների հետ.

- կազմակերպել և ղեկավարել օբյեկտի պայթյունահրդեհավտանգ արտադրամասերի և տեղամասերի օպերատիվ քարտերի վերակազմման աշխատանքները.
- կազմակերպել և անցկացնել օբյեկտ մուտք գործող անձանց նախնական հակահրդեհային հրահանգավորումը.
- հաշվառել օբյեկտում գտնվող հրդեհաշիջման և հրդեհի ահազանգման ինքնաշխատ համակարգերն ու սարքավորումները, հետևում դրանց տեխնիկական վիճակին.
- կազմել Ջոկատի մարտական պատրաստության ամսեկան դասացուցակները.
- ամփոփել անձնակազմի ուսուցման կիսամյակային և տարեկան արդյունքները, զեկուցում Ջոկատի հրամանատարին և դրանց հիման վրա ներկայացնում համապատասխան առաջարկություններ.
- անցկացնել պահակախմբի մարտական ուսուցման եռամսյակային, կիսամյակային և տարեկան ստուգարքները, արդյունքների մասին զեկուցում Ջոկատի հրամանատարին.
- հսկողություն իրականացնել արտադրամասերի հրդեհային անվտանգության նորմերի և կանոնների պահանջների կատարման նկատմամբ.
- իր իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել սահմանված պաշարների, հանդերձանքի, փրկարարական, հրշեջ-փրկարարական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահպանության, սարքին վիճակում պահելու և ճիշտ օգտագործելու համար, պարբերաբար ստուգել դրանց առկայությունը և վիճակը.
- Ջոկատի հրամանատարի հանձնարարությամբ անցկացնել Ջոկատի անձնակազմի, հանդերձանքի, գույքի, սարքավորումների և փրկարարական, հրշեջ-փրկարարական տեխնիկայի շարային ստուգատես, արդյունքների մասին զեկուցել Ջոկատի հրամանատարին.
- իր իրավասության սահմաններում հսկողություն իրականացնել Ջոկատի փրկարարական (ջրափրկարարական), հրշեջ-փրկարարական տեխնիկայի և միջոցների հետ աշխատելու, պարապմունքների, ուսումնավարժությունների անցկացման և փրկարարական, հրդեհաշիջման, ջրափրկարարական

աշխատանքների իրականացման ժամանակ անվտանգության պահանջների կատարման և պահպանման նկատմամբ.

- իմանալ Ջոկատի յուրաքանչյուր ծառայողի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, մշտապես աշխատանքներ տանել ենթակաների դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.
- ամենօրյա հսկողություն սահմանել պարապմունքների որակյալ անցկացման և առկա փաստաթղթերի գրագետ և ճիշտ գրանցման նկատմամբ.
- իր իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել Ջոկատի անձնակազմի անվտանգության ապահովման համար փրկարարական և ռազմական տեխնիկայի հետ աշխատելիս, հատուկ պարապմունքների և աշխատանքների անցկացման ժամանակ անվտանգության պահանջները նախօրոք հասցնել ենթականերին ու պահանջել դրանց խստագույն կատարումը.
- մշտապես գիտենալ Ջոկատին հատկացված փրկարարական և ռազմական տեխնիկայի, զենքի, զինամթերքի, նյութական այլ միջոցների առկայությունը և վիճակը, ինչպես նաև ամենօրյա ղեկավարություն իրականացնել դրանց հաշվառման նկատմամբ.
- համաձայն «Հրդեհների վերլուծության կարգի» պահանջների անցկացնել ջոկատի հրդեհաշիջման տարածքում առաջացած հրդեհների վերլուծություն և տալ եզրակացություն.
- կազմակերպել և իրականացնել հրդեհաշիջման տարածքի հակահրդեհային ջրաղբյուրների և հրշեջ-հիդրանտների ստուգումների և ներկայացնել առաջարկություններ անսարքությունների վերացման համար.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Խնդրի լուծում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Կառավարում արտակարգ իրավիճակներում
3. Ժամանակի կառավարում
4. Կոնֆլիկտների (սթրեսի) կառավարում
5. Ծառայությունների մատուցում և կառավարում (քաղաքացիների սպասարկում)

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և

մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայրի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-12)։

1.2. Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին, Կենտրոնի պետի տեղակալին։

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Կենտրոնի ավագ հրահանգիչը անմիջականորեն ծառայողներ չունի։

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Կենտրոնի ավագ հրահանգիչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի պետի կողմից նշանակված ծառայողը։

1.5. Աշխատավայրը

Հայաստան, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի Ֆրոնտիկ Թևոսյան 144։

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

- Կենտրոնի պետին, Վարչության պետին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով։
- աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ։
- իրականացնում է Կենտրոնին հանձնարարված աշխատանքները, Կենտրոնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝

իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը։

- պարբերաբար Կենտրոնի պետին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ։
- Վարչության պետի (տեղակալի), Կենտրոնի պետի (տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ։

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։
- իրավական պաշտպանությունը։
- առողջության պահպանումը։
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը։
- նշանակման արդյունքները բողոքարկելը։
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը։
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը։

Պարտականությունները՝

- իրականացնել հրդեհաշիջման միջոցառումների և փրկարարական աշխատանքները։
- առաջին բժշկական օգնության ցուցաբերել վթարների և խոցման օջախներում տուժածներին։

- իրականացնել ակնապատ տարածքների հայտնաբերում, արգելանշանների տեղադրում (ակնազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողություն.
- իրականացնել ջրաղբյուրների հայտնաբերման, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքները.
- իրականացնել ավերված, խարխլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում, հայտնաբերում, դուրս բերման և տեղափոխման աշխատանքները.
- իրականացնել պարեկապահակային ծառայություն.
- ՀՀ ՋՌԽ զորամասերի հետ համատեղ իր իրավասության շրջանակներում մասնակցել հակառակորդի կողմից ներթափանցված հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասազերծման գործողություններին.
- իր իրավասության շրջանակներում աջակցել բնակչության տարահանման միջոցառումներին.
- իր իրավասության շրջանակներում մշակել Կենտրոնի պատրաստականության բերման պլանը.
- իր իրավասության շրջանակներում մասնակցել Կենտրոնի ստորաբաժանումներին կցագրված զորահավաքային ռեսուրսների ուսումնասիրմանը և որակական ու քանակական չափորոշիչների ճշգրտմանը (անձնակազմ և տեխնիկա).
- մասնակցել զորահավաքային ծավալման ուսումնական վարժանքներին.
- իր իրավասության շրջանակներում իրականացնել հետախուզություն.
- Կենտրոնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքի մասին մշակել հաշվետվություններ ու վերլուծություններ.
- Վարչության պետի և Կենտրոնի պետի (տեղակալի) հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության

պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը
Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես

է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխզնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Գ-5)։

1.2. Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին և նրա տեղակալին։

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Կենտրոնի պետին անմիջականորեն ենթակա են Կենտրոնի ծառայողները։

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Կենտրոնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնի պետի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Կենտրոնի ավագ հրահանգիչը։

1.5. Աշխատավայրը

Հայաստան, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի Ֆրոնտիկ Թևոսյան 144։

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

- ղեկավարում է Կենտրոնի անձնակազմի մարտական պատրաստությունը և դաստիարակությունը, հմտորեն ղեկավարում է կենտրոնը։
- անցկացնում է զորավարություններ, վարում է Կենտրոնի շտաբի նախապատրաստությունը ջոկատների մեջ չմտնող խմբերի հրամանատարների, նրանց տեղակալների, ծառայությունների

պետերի, ինչպես նաև Կենտրոնի ստորաբաժանումների հետ անցկացնում է պարապմունքներ։

- ապահովում է ենթակա անձնակազմի մարտական պատրաստականությունը, ծառայողական կարգապահությունը, պատրաստությունը մարտական առաջադրանքների, հրդեհաշիջման, փրկարարական, ջրափրկարարական և այլ աշխատանքների կատարմանը։
- կազմակերպում և իրականացնում է միջոցառումներ անձնակազմը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան և այլ նյութական միջոցները զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով տեղական և քաղաքացիական պաշտպանության առանձնահատկությունները։
- փրկարարական, ջրափրկարարական, հրդեհաշիջման աշխատանքներ և մարտական առաջադրանք կատարելու վերաբերյալ կարգադրություն ստանալու դեպքում ճշտում է խնդիրն ըստ տեղի, ժամանակի և իրականացման ուղիների. հնարավոր կարճ ժամկետում ապահովում է գործողությունների վայր ստորաբաժանման ժամանումը, անհրաժեշտության դեպքում անձամբ մեկնում և ղեկավարում է գործողությունները, ապահովում է համագործակցությունն այլ ծառայությունների հետ։
- հաստատում է փրկարարական ծառայողների արձակուրդների ժամանակացույցը։
- կազմակերպում է Կենտրոնի տեղաբաշխման վայրի պաշտպանությունը, վերահսկում պահակային և ներքին ծառայությունների աշխատանքը, անձամբ ստուգում դրանց կատարումը։
- միջոցներ է ձեռնարկում հանցագործությունների և պատահարների կանխման ուղղությամբ, իսկ դրանց կատարման դեպքում զեկուցում ավագ պետին։
- վերլուծում է մարտական պատրաստության, կարգապահության և ներքին կարգ ու կանոնի վիճակը, ոչ ուշ, քան ամիսը մեկ ամփոփում արդյունքները և միջոցներ ձեռնարկում դրանց բարելավման ուղղությամբ։
- միջոցներ է ձեռնարկում սահմանված պաշարների, փրկարարական և ռազմական տեխնիկայի, սպառազինության ու այլ նյութական միջոցների պահպանության, սարքին վիճակում պահելու և ճիշտ օգտագործելու համար, պարբերաբար ստուգում դրանց առկայությունը, վիճակը և մարտական պատրաստությունը։

11. հսկողություն է իրականացնում փրկարարական և ռազմական տեխնիկայի, այլ միջոցների հետ աշխատելու, պարապմունքների, ուսումնավարժությունների անցկացման և փրկարարական աշխատանքների կամ մարտական առաջադրանքների իրականացման ժամանակ անվտանգության պահանջների կատարման և պահպանման նկատմամբ.
12. պարբերաբար անցկացնում է Կենտրոնի անձնակազմի, հանդերձանքի, գույքի, սարքավորումների և փրկարարական ու ռազմական տեխնիկայի շարային ստուգատես, արդյունքների մասին զեկուցում վարչության պետին.
13. կազմակերպում է Կենտրոնի տարածքում ստորաբաժանումների և շինություններում փրկարարական ծառայողների ճիշտ տեղաբաշխումը.
14. անձնակազմին բազմակողմանիորեն նախապատրաստում է օրվա վերակարգի ծառայության կատարմանը, կազմակերպում է ներքին ծառայության կատարման աշխատանքները, անձամբ մասնակցում է պահակակետերի ստուգման, ինչպես նաև հանձնարարականներ մշակման, օրվա վերակարգի ծառայության բարելավման համար տարվող աշխատանքներին.
15. կազմակերպում է Կենտրոն մուտք գործած փրկարարական և ռազմական տեխնիկայի, սպառազինության, հանդերձանքի ու այլ գույքի ընդունումը և շարք մտցնելը, անձամբ ստուգում է անձնակազմի պատրաստվածությունը, դրանց ընդունումը և շահագործումը.
16. կատարելագործում է մասնագիտական պատրաստությունը և Կենտրոնի ղեկավարման մեթոդները.
17. սարքին վիճակում է պահում սպառազինությունը, փրկարարական տեխնիկան և նյութական այլ միջոցները.
18. հսկողություն է իրականացնում Կենտրոնի անձնակազմի կողմից պաշտոնական պարտականությունների կատարման ուղղությամբ.
19. պարբերաբար վարչության պետին զեկույց է ներկայացնում պլաններով և այլ հանձնարարականներով Կենտրոնի առջև դրված խնդիրների կատարման ընթացքի վերաբերյալ.
20. իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- կազմակերպել հրդեհաշիջման միջոցառումների և փրկարարական աշխատանքները.
- կազմակերպել վթարների և խոցման օջախներում տուժածներին առաջին բժշկական օգնության ցուցաբերումը.
- կազմակերպել ականապատ տարածքների հայտնաբերման, արգելանշանների տեղադրման (ականազերծման միջոցառումների իրականացում) և տարածքի հսկողության իրականացումը.
- կազմակերպել ջրաղբյուրների հայտնաբերում, ջրհանման և մաքրման, հորատման աշխատանքները.
- կազմակերպել ու իրականացնել ավերված, խարխուլված և այրվող շինություններից, փլատակներից տուժածների որոնում,

հայտնաբերում, դուրս բերման և տեղափոխման աշխատանքները.

- կազմակերպել ու իրականացնել պարեկապահակային ծառայություն.
- ՀՀ ՁՈՒ զորամասերի հետ համատեղ մասնակցել հակառակորդի կողմից ներթափանցված հետախուզական խմբերի հայտնաբերման, շրջափակման և վնասագերծման գործողություններին.
- աջակցել բնակչության տարահանման միջոցառումներին.
- մշակել Կենտրոնի պատրաստականության բերման պլանը.
- մասնակցել Կենտրոնի ստորաբաժանումներին կցագրված զորահավաքային ռեսուրսների ուսումնասիմանը և որակական ու քանակական չափորոշիչների ճշգրտմանը (անձնակազմ և տեխնիկա).
- կազմակերպել ու իրականացնել զորահավաքային ծավալման ուսումնական վարժանքների անցկացումը.
- Կենտրոնի հատուկ օբյեկտների պահպանության ստորաբաժանումների և ՀՀ ՁՈՒ զորամասերի միջև մշակել փոխգործողության պլաններ.
- իրականացնել հետախուզություն.
- Կենտրոնի տարեկան, ամսական աշխատանքային պլանների և սահմանված ժամկետներում դրանց կատարման ընթացքի մասին մշակել հաշվետվություններ ու վերլուծություններ.
- Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի և Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության գլխավոր պաշտոնների խմբում կարող է նշանակվել այն անձը, ով վերջին երկու տարում զբաղեցրել է փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայրից ոչ

ցածր կոչում կամ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Գ-6)։

1.2. Ենթակա և հաշվետու է

Կենտրոնի պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Կենտրոնի պետին։

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Կենտրոնի պետի տեղակալին անմիջականորեն ենթակա են, Կենտրոնի ծառայողները։

